հասկացել. երբ Գրիգորեանը նկարագրելիս է եղել ընդհանրապէս ընկերութիւնների անհրաժեշտութիւնը, նորանց լաւ կողմերը, օգուտները հասարակական կեանքի մէջ, պ. Մովսէսեանը կարծել է թէ այդ գեղեցիկ յատկութիւնները (գովասանքները) պ. Գրիգորեանը «Մարդ. ընկ.» անդամների գլխին է թափել։

Շատերից մինը

## ՆԱՄԱԿ ԽԱՐԿՕՎԻՑ

—

30 մայիս

Խնդրում եմ նեղութիւն չը համարէք, այս քառասունհինգ րուբլին ստանաք, և ուղարկէք Վանի սովատանջների համար. յիշեալ գումարն ժողոված եմ Խարկովում զանազան մարդկանցից, այսինքն, Պետրոս Ց. Շախնազարեանց 10 ր., Սարգիս Եաշուշբաբեանց 5 ր., Անյայտ մարդկանցից, ռուս ու հայ, 20 ր., Վասիլի Ալէքսանդրովիչ Մատվեօվ 5 ր.։ Ընդամենը 45 րուբլի։

Մարտիրոս Վասիլեան

## ՆԱՄԱԿ ՌՕՍՏՕՎԻՑ (ԴՕՆԻ ՎՐԱ)

—

Յունիսի 2-ին

Հանգանակութեամբ ժողոված եմ տեղիս փոքրաթիւ հայ օտարականներից յօգուտ Թշուառ Վանի սովեալներին ընդամենը 39 րուբլի։ Ուղարկում եմ ձեզ ընդ գրովս, խնդրելով հասցնէք ուր հարկն է, և տպագրէք նուիրատուների անունները ձեր պատուական լրագրում։

Եղբայրք Մաղավուզեանց 10 ր. 22 կ., Ստեփան Զաքուղով 2 ր., Մահամատ Թաղի Ջամալ Բէկով 1 ր., Ճհանգիր Բաղիրով 1 ր., Հայ մին 1 ր., Բաղալ Յունանով 2 ր., Թէվոս Եաղուբով 1 ր., Մկրտիչ Ստեփանով 1 ր., Ստեփան Ավետով 1 ր., Օհաննէս Յակոբով 50 կ., Григорій Ачкасевъ 50 կ., Неизвѣстный 1 ր., Արզար Սարգարով 1 ր., Ասլան Սարգարով 1 ր., Ասլան Ղազարով 30 կ., Եզդ Խուդավերդով 1 ր., Աւետիք Բուդաղով 50 կ., Ավետ Առաքելով 50 կ., Եփրեմ Նազարով 50 կ., Յարութիւն Սարգիսով 20 կ., Մկրտիչ Խուդավերդով 1 ր., Միքայէլ Յարութիւնով 20 կ., Պապաջան Յովհաննէսով 40 կ., Հայ մին 18 կ., Բաբայ Զախուրով 1 ր., Մկրտիչ Զաքուդով 1 ր., Неизвѣстный 1 ր., Գալուստ Անպէղկով 1 ր., Խանամիր Օվասատով 1 ր., Գէորգ Պլապանով 1 ր., Димитрій Пачаджи 1 ր., Յարութիւն Թունիեանց 1 ր., Յովակիմ Բէգլարեանց 2 ր.։ Ընդամենն է 39 րուբլի. փոստի ծախքը՝ վճարած եմ ինձմէն։

Ի. Մաղավուզեանց

## ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Յուլիսի 16

Երեկոյ է, օրուայ այն ժամը, երբ ցերեկվայ այրող, խեղդող տաքութիւնից յետոյ Շամախու հասարակութիւնը խումբ խումբ դիմում է «կարմիր փողոց» կամ բուլվար մի փոքր ազատ, զով օդ շնչելու։ Քաղաքի բուլվարում ժողովված են հասարակութեան ընտիր անդամները։ Այստեղ կարելի է նկատել պարթևահասակ Նազար-բէկին և կարճահասակ ու երկայնաքիթ Կարապետ աղային, և չեկամօրուս ու կապուտ աչք Իվան Սավիչին, վերջապէս դուք կարող էք այստեղ նկատել և հայի, և Թուրքի, և ռուսի պատուելի ներկայացուցիչներին։ Նոցա մէջ տիրում է մի տաք վիճաբանութիւն։

—Ես ձեզ հաւատացնում եմ, ասում է պարթև Նազար-բէկը, ձեռքերը օդի մէջ շարժելով, որ մեր այս մտադրութիւնը շատ գեղեցիկ է։ Դուք գիտէք, որ մեր քաղաքի նման տխուր, ամեն մի զուարճութիւնից զուրկ քաղաքին, անպատճառ հարկաւոր է մի կլուբ ունենալը։ Մտածեցէք, պարոններ, դուք, որ իւրաքանչիւր տարի այցելում էք Մոսկվա, Պետերբուրգ, որ ծանօթ էք ուրիշ քաղաքների հասարակական կեանքի հետ, ինչ էք զգում, երբ վերադառնալով այստեղ մեն ու մենակ փակվում էք ձեր տան չորս պատերի մէջ և ժամանակներդ սպանելու համար ձանձրութեամբ պարապվում։

Միթէ լաւ չէր լինի, եթէ մենք ևս ունենայինք մի կլուբ, ուր գոնէ գիշերները ժողովելով, տեսնվէինք իրարու հետ, փոխարինէինք իրարու հետ մեր մտքերը և որ առաւելն է ազատ մնայինք այդ սպանող ձանձրութիւնից, որ ամեն մի քայլում երևում, խեղդում է մեզ։

—Ես իմ Աստուածս ճշմարիտ էք ասում—վկայում է Կարապետ աղան։

—Ճշմարտութիւնը աներկբայելի է, շարունակում է Նազար-բէկը—դուք ինքներդ ևս խելք ունէք, գատողութիւն ունէք, տեսնում էք մեր քաղաքի դրութիւնը, տեսնում էք մեր դրութիւնը։ Ասացէք խնդրեմ, միթէ դուք ձեզ այդ ձանձրութիւնից ազատվելու համար կը խնայէիք 15 կամ 20 րուբլի։

—Եւ ոչ 100 կամ 200 րուբլի—պատասխանում է Կարապետ աղան, համարձակ դէմքով։

—Ուրեմն էլ ինչու ենք ուշացնում, ինչու ենք սպասում։

—Էլ ինչու ենք ուշացնում, ինչի ենք սպասում, կրկնում են միաբերան և Կարապետ աղան, և Իվան Սավիչը և Ղարիբ աղան և միւսները, որից յետոյ տիրում է մի խորին լռութիւն։ Հանդիսականները լուռ ու մունջ սկսում են իրարու երես նայել։

—Ասում են երկաթուղին ուզում են Շամախով անցնել, ասում է վերջապէս Այրալի-բէկը, խզելով այդ սպանիչ լռութիւնը։

—Սուտ է, մի հաւատաք, լսվում է Սերգէյ Ռուստամիչի ձայնը, Շամախով երբէք երկաթուղին չէ կարող անցնել. ախր ով է ուշադրութիւն դարձնում Շամախու նման մի քաղաքի, ուր ոչ դումա կայ, ոչ գաստինցա, ոչ բանկ, ոչ կլ.....

բայց այստեղ կարծես պարոնը սթափվելով և չը կամենալով մի հին վէրք նորոգել, իսկոյն լռում է խօսքը կիսատ Թողնելով։

—Բայց, պարոններ, լսվում է անմիջապէս նրբանից յետոյ Սարգիս աղայի խռպոտ ձայնը, ինչու մենք ևս չենք հիմնում և դումա և բանկ, և.....

—Այո, ինչու մենք ևս չենք հիմնում և դումա և բանկ, կտրում է նրա խօսքը կրակոտ Կարապետ աղան, ումանից ենք պակաս։ Այն ժամանակ, երբ Շամախին գուբերնսկի քաղաք էր, Բագուի հոտն անգամ չը կար, բայց այժմ Բագուն դումա էլ ունէ, բանկ էլ ունէ, իսկ մեզ ինչ ունենք։ Ի՞նչ կասես սրա համար, աղա Մէհթի, դառնում է նա դէպի իր կողքին կանգնած Թուրքը, եթէ վատ եմ ասում մի ապտակ էլ երեսիս խփիր, ասիր թէ վատ ես ասում. ախր ինչ անեմ է, բացականչում է նա աւելի և աւելի տաքանալով, մարդու սիրտը քիչ է մնում որ ճաքի, երբ մտածում է, որ հիմի ուրիշ քաղաքացիք էլ կասեն թէ շամախեցիները հոգս չեն անում իրանց քաղաքի համար։ Չէ, եղբայր, այդպէս Թողնել չէ կարելի, հէնց էքուցվանից պէտք է հիմնել բանկը։ Ես ինքս երեք բաժանորդ կը գրվիմ սրա համար, աւելացնում է նա, փառահեղութեամբ իր նայուածքը ման ածելով իր շրջապատողների վրա։

—Իսկ ես հինգ... ես վեց... լսվում են մի քանի խառնաշփոթ ձայներ բազմութեան մէջից։

—Իսկ ես երկու հարիւր չիսուն, բացականչում է յանկարծ Այրապետ Առաքելիչը, որ նստարանի վրա նստած Նազար-բէկի հռետորութեան ժամանակից զուարճանում էր Մորփէոսի գրկի մէջ և այժմ յանկարծ զարթելով ու կարծելով թէ խօսքը դեռ ևս կլուբի վրա է, շռայլում է իր առատ նուէրները։

Վէճը կամաց կամաց տաքանում է։ Առաջ են գալիս նորանոր հարցեր, կազմվում են պրօէկտներ և վերջապէս գիշերվայ ժամը երկուսին մեր պարոնները Շամախին մի նոր փարիզ դարձնելով, ցրվում են իրենց տները, միւս իրիկուն ժողովվելու և կրկին խորհրդակցելու խօսք տալով իրարու։

Բայց գիտես, սիրելի ընթերցող, ահա երկու տարի է, որ քաղաքի այդ ընտիր պարոնների մէջ ամեն իրիկուն բուլվարի մի որոշեալ տեղում անփոփոխ կրկնվում է այդ խօսակցութիւնը, և ով գիտէ, գուցէ Նազար-բէկի, Կարապետ աղայի և միւսների ժառանգները դեռ ևս շատ տարիներ ամեն իրիկուն ժողովվեն այդտեղ վիճելու այդ հարցի մասին

Ա. Զախարեանց

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 27 յուլիսի

«Մշակի» 94 համարում ի նախազգուշութիւն հայ-Թարգմանիչների՝ յայտնել էի հրապարակաւ, որ արդէն Թարգմանել աւարտել եմ Ջօն Ստիւարտ Բլէկկիի «Մ տ ա ւ ո ր, ֆ ի զ ի ք ա կ ա ն և բ ա ր ո յ ա կ ա ն ի ն ք ն ա կ ր Թ ո ւ Թ ի ւ ն» գիրքը։ Նիւթական դրութիւնս չը ներելով, ստիպված էի բաժանորդագրութեամբ տպագրել. այդ նպատակով դիմել էի հայաբնակ քաղաքներում գտնվող իմ բարեկամներիս և խնդրել որ բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն առնելով, օգնէին ինձ յիշեալ աշխատութիւնը տպագրելու։ Եւ երկիւղութեամբ սրտի պիտի խոստովանեմ, որ խնդիրս զուր չանցաւ. բարեկամներիցս շատերը արդէն ուղարկեցին ինձ բաժանորդաթերթը և դրամները։ Որովհետև «Մշակի» վերոյիշեալ համարում ի միջի այլոց ասել էի, որ ե թ է հ ա ն գ ա մ ա ն ք ն ե ր ը ն ե ր ե ն, յուլիսի վերջերին ներկայ 1880 ամի լոյս կը տեսնի գիրքը, բայց առ այժմ բաժանորդաթերթը բոլոր տեղերից ստացած չը լինելով, տպագրութիւնը ակամայ պիտի ուշանայ. ուստի դիմում եմ այն ազնիւ բարեկամացս, որոնք զանազան պատճառներով մինչև այժմ չեն կարողացել հասցնել բաժանորդաթերթը և դրամները, եթէ արդէն ստորագրութիւնը աւարտել են, բարեհաճեն օր առաջ ինձ հասցնելու, որպէս զի գոնէ օգոստոսի վերջերին կարողանամ աւարտել տպագրութիւնը։ Իմ հասցէն՝ Въ г. Тифлисъ. Григорію Шахъ-Будагянцу. (Въ центральную книжную торговлю. На Дворцовой улицѣ, галлерея Арцруни.)

Գրիգոր Շահբուդաղեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անյայտ մի պարոնից որ իր բնակած տեղը և անունը չէ ասել մեզ և ստորագրել է միայն Ս. Ս. տառերով, ստացանք 5 րուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան։

—

ՄԱՅԿՕՊ քաղաքից Խաչատուր Նազարեանցից ստացանք յօգուտ Հայաստանի սովեալների 10 րուբլ, որ ինքն ստացել է իր մի բարեկամից։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Այս տարի ոչ մի տեղ ամբողջ Անդրկովկասում այնքան մորեխ չը կար, որքան Գօրու գաւառում։ Աւելի քան 60,000 դեսիատին, թէ վազի այգիներով, թէ ցորենի և թէ սիմինդրի ցանքերով ծածկած գետինը ենթարկվեցաւ մորեխի յարձակմանը։ Բայց Գօրու ազգաբնակութիւնը քաջ կերպով պատերազմեց մորեխի դէմ և 60,000 դեսիատինից կարողացաւ 58,000 դեսիատին ազատել աւերիչ միջատից, իսկ միայն 2000 դեսիատին հողի ցանքերը զոհ գնացին։ Ամբողջ ազգաբնակութիւնը դաշտը դուրս եկաւ. տղայ, աղջիկ, կին, մարդ, պառաւ, երեխայ,—բոլորն էլ պատերազմում էին մորեխի դէմ։ Առաջ ժողովրդի մէջ այն համոզմունք կար, որ մորեխը անհնարին է ոչնչացնել, որովհետև այդ միջատը Աստուծուց մեզ ուղարկված պատիժ է և ինչքան նրան ոչնչացնես, այնքան նա կը բազմանայ։ Այժմ Գօրու գաւառի գիւղացիները և կալուածատէրերը համոզվեցան որ մարդու աշխատասիրութեան առջև ոչինչ անհնարին չը կայ և որ մորեխը շատ հեշտ է ոչնչացնել ազգաբնակութեան միացած ոյժերով»

—

Վերջին ժամանակները ռուսաց յայտնի ազգանուն կրող և հարուստ տոհմին պատկանող պ. Պաշկով, հիմնել է Ս. Պետերբուրգում մի տեսակ լսարան, որտեղ անթիւ բազմութիւն, մանաւանդ ազնուական բարձր դասակարգին պատկանողներից, հաւաքվում է թէ Աստուծու խօսքը լսելու, աւետարանի վրա հիմնված քարոզների ձևով և թէ սաղմոսներ երգելու համար։ Պաշկովի հիմնած լսարանը մի և նոյն ժամանակ և աղօթատուն է։ Այժմ «Русск. Курьеръ» լրագիրը հաղորդում է որ այս օրերս Պաշկովի կուսակիցներից մի քանիսները եկել են և Մոսկվա, որտեղ նոյնպէս հիմնեցին մի լսարան և աղօթատուն։ Լրագիրը ասում է որ սկզբից Մոսկվայի պօլիցիան ուզեց արգելել այդ ժողովարանը, բայց ներկայ գտնվելուց յետոյ, չարգելեց։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Արարատեան» ընկերութեան ձեռքով հրատարակված և Կ. Պօլսի մէջ տպված Ն. Տէր-Ղևոնդեանի «Մայրենի լեզուի հեղինակութեան երկու հատորներ՝ այբենարանը և ընթերցանութեան երկրորդ գիրքը։ Տպագրութիւնը և պատկերները բաւական աջող են։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՍՈՎԻ ՄԱՍԻՆ

—

Վանայ սովելոց յանձնաժողովին ատենադպիր Մեծ. Պ. Ս. Տէր-Սարգիսեանց այս շաբթու Կ. Պօլիս եկաւ Վանէն։

Իւր այս ուղևորութեան ժամանակ, Պ. Ս. Տ. Սարգիսեանց Էջմիածին ալ գնացած լինելով, ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսը բարեհաճիր է եկեղեցիներէն հանգանակեալ մեծագումար նպաստներէն 605 րուբլի յանձնել անոր 'ի նպաստ Վասպուրականի սովատանջ ազգայնոց։

Ահա այս եղած է ամենայն Հայոց սրբազնասուրբ և բարեխնամ Հովուապետ Վ.Ե.Հ. Տ. Գէորգ Դ-ի բովանդակ օգնութիւնը Վասպուրականի 70 հազար սովելոց ազգայնոց համար, որոցմէ՝ լաւ ծնուս նայելով քանի մը հազար հոգի դժբաղդաբար զոհ գընացած են արդէն անօթի սովէն։ Ստուգիւ՝ մարդ չը կրնար և չուզեր հաւատալ այս բանին և սակայն ճշմարիտ է. Գէորգ Դ. Կաթողիկոսն՝ իւր վեհարանէն 12 ժամ հեռաւորութիւն ունեցող Պայազիտի, 25 ժամ հեռաւորութիւն ունեցող Ալաշկերտի և 40 ժամ հեռաւորութիւն ունեցող Վասպուրականի ազգայնոց սովամահ ջարդուելն անկարեկից աչօք կը դիտէ, և վերջապէս 605 րուբլիի ամենաչնչին գումար մը ղրկելով գոհ կը լինի, երբոր աշխարհի հեռաւոր կողմերէն, մինչև իսկ օտարազգիք մարդասիրաբար գըթութեան ձեռք կարկառելով, հազարաւոր ոսկիներ կը ղրկեն ու կը բաշխեն այդ խղճալեաց։

Ասիական Թուրքիոյ և Արևմտեան Պարսկաստանի սովելոց համար մինչև ցարդ հանգանակեալ գլխաւոր նպաստից ցուցակն հետևեալն է կլոր հաշուով.

Հայկական յանձնախումբ 20,000 ոսկի, Օսմանեան—4,000 Անգղիական 8,000—Անգլիոյ Միսիօնական յանձն. 4,000, Անգղիոյ Եկեղեցական 5,000, Գաղիայէն 3,000, ուրիշ երկիրներէն 1,000, Հայ-Բողոքական հասարակութիւն 200. գումարն է 45,200։

Ռուսիայէն ալ ուղղակի Վան նպաստներ ղրկուած են հայ սովելոց օգնութեան համար, բայց անոնց Թուոյն վրա առ այժմ տեղեկութիւն չունիմք։ Հաւանական է որ Վանայ, Կարնոյ, Տիարպէքիրի, Մշոյ, Մուսուլի, Հէքքեարիի, Ուրմիոյ և Դավրէժի քանի մը հարիւր հազար հայ, քուրդ, Թուրք, ասորի, արապ և պարսիկ սովելոց համար մինչև ցարդ հանգանակեալ բոլոր նպաստներուն գումարն 50,000 ոսկւոյ հասնի։

(Մասիս)

# «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յուլիսի։ Ոզորմած քոյրերի Թւում, որոնք ուղևորվում են դէպի Ախալ-Տէկէ, գտնվում է նոյնպէս կամսուհի Ելիսավէտա Դմիտրիևնա Միլիւտինա։

ՍԿՈՒՏԱՐԻ, 29 յուլիսի։ Ալբանցիները ճայթեցրին յունական հիւպատոսի տունը Պրիզրենդի մէջ։ Տունը օդը բարձրացաւ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՕՐՈԴ, 29 յուլիսի։ Վօլգա գետի այն կողմը անտառներ են այրվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յուլիսի։ «Петерб. Вѣд.» լրագիրը լսել է, որ երէկ առաւօտ «Դէմուտ» հիւրանոցի մէջ կալանաւորված է նշանաւոր յանցաւոր։

ՎԻԷՆՆԱ, 30 յուլիսի։ «Ջէգդա» շոգենաւը, որ 953 ուխտաւորների հետ Ջէդդա էր ուղևորվում՝ ջարդվեցաւ։ 21 մարդ ազատվեցան։

ԼՕՆԴՕՆ, 30 յուլիսի։ Էյուբ-խանը գտնվում է Կանդահարից վեց մղոն հեռաւորութեամբ։ Քաղաքը պատրաստված է պաշտպանութեան համար և պաշարեղէններ ունի։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԱՒՐԻԶ քաղաքի մի մասնաւոր դպրոցի համար պահանջվում է մի հմուտ ՎԱՐԺԱՊԵՏ ՀԱՅՈՑ ԵՒ ՌՈՒՍԱՑ լեզուների համար խիստ նպաստաւոր պայմաններով։ Ցանկացողները կարող են դիմել ՀԱԴԻՆՕՎԻ քարվանսարայն պ. ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆՑԻ կանտորը։

Дозволено Цензурою 31 Іюля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона